

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՊԱԼԱՏ  
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ԵՎ ՃԱՐՏԱՐԱԳԵՏ-ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐՆԵՐԻ  
ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգը /այսուհետ՝ Կարգ/ մշակված է «Ճարտարապետական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 15-րդ հոդվածներով նախատեսված՝ ընդհանուր պայմաններով արտոնագրման պահանջներին և Հայաստանի ճարտարապետների պալատի (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 6-րդ մասին համապատասխան:

2. Կարգով սահմանվում են ճարտարապետների և ճարտագետ-կոնստրուկտորների որակավորման քննությունների անցկացման պայմանները:

3. Արտոնագիր ստանալու համար Պալատի համապատասխան որակավորման հանձնաժողովին կարող են դիմել «Ճարտարապետական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պայմաններին բավարարող ճարտարապետները և 15-րդ հոդվածի պայմաններին բավարարող ճարտարագետ-կոնստրուկտորները:

**II. ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՈՒՂԵԿՑՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

4. Արտոնագիր ստանալու համար հավակնորդը Պալատի համապատասխան որակավորման հանձնաժողովին է ներկայացնում.

1) դիմում՝ նշելով հայցվող որակավորման կարգը (դասը),

2) տեղեկանք հավակնորդի աշխատանքային (մասնագիտական) փորձառության մասին՝ ներառելով հավակնորդի հեղինակած նախագծերի ցանկը (այդ թվում՝ համահեղինակությամբ, նշելով համահեղինակների անունը, ազգանունը և հավակնորդի կողմից տվյալ նախագծում կատարած մասը)՝ վավերացված այդ նախագծերը թողարկած կազմակերպությունների կողմից,

3) հավակնորդի կողմից մշակված նախագծերի ալբոմ Ա3 ձևաչափով (ալբոմը պետք է ներառի հավակնորդի կողմից նրա փորձառության վերաբերյալ ներկայացված տեղեկանքում նշված նախագծերը կամ նրանց մի մասը) և էլեկտրոնային կրիչի վրա, ընդ որում, որակավորման հանձնաժողովը կարող է պահանջել ներկայացնել նաև հավակնորդի կողմից կատարված աշխատանքների ցանկում ընդգրկված որևէ նախագծի ամբողջական ալբոմը,

4) մասնագիտական կրթության դիպլոմի պատճենը,

5) անձնագրի պատճենը,

6) 2 լուսանկար՝ 3x4սմ չափսի,

7) Պալատի կազմակերպած կամ մասնագիտական վերապատրաստման այլ դասընթացներին մասնակցության հավաստագիր (առկայության պարագայում),

5. Պալատի որակավորման համապատասխան հանձնաժողովի քարտուղարը դիմումը ստանալուց հետո ստուգում է ներկայացված փաստաթղթերի լրակազմը և համապատասխանությունը սույն կարգի 3-րդ կետի պահանջներին:

6. Դիմումի ընդունումը կարող է մերժվել հետևյալ հիմքերով.

1) հավակնորդի ներկայացրած աշխատանքները չեն համապատասխանում որակավորման հայցվող դասով սահմանված պահանջներին,

2) փաստաթղթերի լրակազմն ամբողջական չէ կամ ներկայացված փաստաթղթերում բացահայտվել են ոչ հավաստի տեղեկություններ:

7. Ստացված դիմումների ընթացքի վերաբերյալ Պալատի հանձնաժողովների համապատասխան մատյաններում կատարվում է գրառում:

8. Դիմումի ընդունումը մերժելու դեպքում Պալատի հանձնաժողովը ենօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է հավակնորդին՝ նշելով մերժման հիմքերը:

9. Հավակնորդը թերությունները վերացնելուց հետո կարող է արտոնագրման համար կրկին դիմել որակավորման հանձնաժողովին:

10. Արտոնագրման գործընթացն իրականացվում է հետևյալ փուլերով՝

1) հարցազրույց հավակնորդի հետ և նրա կողմից մշակված նախագծերի ներկայացում, ինչի արդյունքում գնահատվում է հավակնորդի՝ հայցվող արտոնագրի դասին համապատասխան նախագծեր մշակելու կարողությունը և դրանք հիմնավորելու հմտությունը,

2) քննության հանձնում թեստային առաջադրանքների ձևով, ինչի արդյունքում գնահատվում են հավակնորդի գիտելիքները ճարտարապետի կամ ճարտարագետ-կոնստրուկտորի մասնագիտական գործունեությանն առնչվող տարբեր ոլորտների վերաբերյալ:

11. Դիմումի ընդունումից հետո առավելագույնը երկշաբաթյա ժամկետում հրավիրվում է որակավորման հանձնաժողովի նիստ՝ հավակնորդի հետ հարցազրույց անցկացնելու և նրա ներկայացրած նախագծերին ծանոթանալու նպատակով:

12. Նիստի արդյունքում հանձնաժողովը կայացնում է որոշում՝ հավակնորդին որակավորման քննություն հանձնելու թույլտվություն տալու կամ դիմումը մերժելու վերաբերյալ՝ համապատասխան հիմնավորումներով: Որոշումը համարվում է ընդունված, եթե դրան կողմ է քվեարկել հանձնաժողովի առնվազն չորս անդամ:

13. Որոշման արձանագրությունը հանձնաժողովի անդամների կողմից ստորագրելուց հետո կցվում է հավակնորդի գործին:

14. Հանձնաժողովի որոշումն ընդունումից հետո ենօրյա ժամկետում պետք է հանձնվի հավակնորդին, ընդ որում, արտոնագրման քննության մասնակցելու թույլտվություն ստացած հավակնորդները միաժամանակ պետք ծանուցվեն քննության օրվա մասին:

### **III.ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ**

15. Քննությունն անցկացվում է հավակնորդի դիմումը հանձնաժողովի կողմից ընդունելուց հետո առավելագույնը մեկամսյա ժամկետում:

16. Ճարտարապետների արտոնագրման քննություններն անց են կացվում Կարգի 1-ին հավելվածով, ճարտարագետ-կոնստրուկտորներինը՝ 2-րդ հավելվածով սահմանված ծրագրերին համապատասխան՝ Պալատի խորհրդի կողմից կազմված քննական առաջադրանքներով:

17. Քննությունների ծրագիրն ու քննական առաջադրանքները զետեղվում են Պալատի՝ հավակնորդների համար հասանելի տեղում, ինչպես նաև Պալատի կայքում:

18. Քննություններն անց են կացվում Պալատում՝ որակավորման հանձնաժողովի առնվազն հինգ անդամի ներկայությամբ:

19. Արտոնագրման քննությանը դիտորդի կարգավիճակով կարող է մասնակցել նաև Պալատի նախագահը կամ նրա հանձնարարությամբ խորհրդի որևէ անդամ:

20. Քննության ժամանակ հավակնորդները քննասենյակում այնպես են տեղաբաշխվում, որպեսզի նրանց միջև բացառվի ուղղակի շփումը:

21. Մինչև քննությունն սկսելը որակավորման հանձնաժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ հանձնաժողովի անդամներից մեկը հավակնորդներին ներկայացնում է քննության պայմանները (թեստերի քանակը, դրանց կազմման սկզբունքները, յուրաքանչյուր դասի արտոնագրի համար ճիշտ պատասխանների նվազագույն շեմը, քննությանը հատկացվող ժամանակը):

22. Հավակնորդները կարող են ընթացակարգային բնույթի առանձին հարցերով դիմել հանձնաժողովին և ստանալ համապատասխան պարզաբանումներ:

23. Մինչև քննությունն սկսելը, յուրաքանչյուր մասնակցի համար՝ իր ներկայությամբ, համակարգչի միջոցով՝ պատահական ընտրանքի սկզբունքով, կազմվում են թեստային առաջադրանքները՝ յուրաքանչյուր առաջադրանքում ընդգրկելով 50 հարց, յուրաքանչյուր հարցի համար՝ պատասխանի 2-4 տարբերակ:

24. Ճարտարապետների համար կազմված քննական առաջադրանքներում՝ հարցերի 30 տոկոսն ընտրվում է ճարտարապետների մասնագիտական գործունեությանն առնչվող ընդհանուր բնույթի հարցերից, 50 տոկոսը՝ հայցվող դասին առնչվող հարցերից, իսկ 20 տոկոսը՝ հարակից դասերին առնչվող հարցերից:

25. Ճարտարագետ-կոնստրուկտորների համար կազմված քննական առաջադրանքներում՝

1) արդյունաբերական, բնակելի, հասարակական շենքերի և կառույցների, աշտարակների, կայմերի և ճոպանուղիների ոլորտի բարձրագույն և առաջին դասերի քննական առաջադրանքները (Ա, Ա1, և Դ1 ենթադասեր) կազմում են առաջադրանքների առաջին խումբը, իսկ երկրորդ և երրորդ դասերի քննական առաջադրանքները (Ա2, Ա3, Դ2 ենթադասեր) կազմում են առաջադրանքների երկրորդ խումբը:

2) տրանսպորտային կառույցների ոլորտի բարձրագույն և առաջին դասերի արտոնագրերի համար առաջադրանքները (Բ. Բ1ա և Բ1բ ենթադասեր) կազմում են քննական առաջադրանքների մեկ խումբ,

3) հիդրոտեխնիկական կառույցների ոլորտի բարձրագույն, առաջին, երկրորդ և երրորդ դասերի արտոնագրման համար առաջադրանքները (Գ, Գ1, Գ2 և Գ3 ենթադասեր) կազմում են քննական առաջադրանքների մեկ խումբ:

26. Յուրաքանչյուր հարցի տակ պետք է զետեղվի այն նորմատիվ ակտի կամ պաշտոնական փաստաթղթի կամ մասնագիտական հրատարակության հղումը, որին համապատասխան կազմվել է հարցը:

27. Համակարգչի միջոցով ընտրված առաջադրանքներում արտացոլվում են դրանց հերթական համարները, համարակալվում են նաև առաջադրանքների էջերը:

28. Հավակնորդը հանձնաժողովին է ներկայացնում առաջադրանքի համարը և բոլորի ներկայությամբ առաջադրանքի բոլոր էջերի ներքևի հատվածներում լրացնում է իր ազգանունը, անունը, հայրանունը:

29. Քննական առաջադրանքը կատարելու համար հատկացվում է երեք ժամ:

30. Քննության ընթացքում չի թույլատրվում օգտագործել համակարգիչ, հեռախոս և տեղեկատվություն ձեռք բերելու այլ միջոցներ, բացառությամբ նորմատիվատեխնիկական փաստաթղթերի տպագրված օրինակների, որոնք տեղադրվում են քննասենյակում՝ հանձնաժողովի կողմից:

31. Քննության ավարտից հետո հավակնորդները պատճենահանում են լրացված առաջադրանքի բոլոր էջերը, ապա բնօրինակը հանձնում են հանձնաժողովին՝ պատճենահանված օրինակը պահելով իրենց մոտ:

32. Հանձնաժողովի անդամները բոլոր հավակնորդների քննական առաջադրանքները ստանալուց հետո ստուգում են հարցերի պատասխանները և ստուգման արդյունքներն անց են կացնում քննական տեղեկագրում:

33. Քննական տեղեկագրում նշվում են քննության անցկացման օրը, մասնակիցների ազգանունը, անունը, հայրանունը, արտոնագրի դասի հապավումը, քննական առաջադրանքի համարը, հարցերի քանակը, ճիշտ պատասխանների թիվը և տոկոսը՝ հարցերի ընդհանուր թվից, ինչպես նաև ստացված գնահատականը՝ «բավարար» կամ «անբավարար» նշումով:

34. Քննական տեղեկագրի ձևանմուշը հաստատում է Պալատի խորհուրդը:

35. Ճարտարապետներին.

1) Ա (առանց սահմանափակումների), Բ (քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ կամ տարածական պլանավորում) և Գ (հուշարձանների ամրակայում նորոգում և վերականգնում) դասերի արտոնագրեր տրամադրելու համար բավարար են համարվում հայցվող դասի և ընդհանուր բնույթի հարցերի առնվազն 80 տոկոս կազմող ճիշտ պատասխանները և հարակից ոլորտների հարցերի առնվազն 60 տոկոս կազմող ճիշտ պատասխանները,

2) Ա1 դասի արտոնագիր տրամադրելու համար բավարար են համարվում հայցվող դասի և ընդհանուր բնույթի հարցերի առնվազն 50 տոկոս կազմող ճիշտ պատասխանները և հարակից ոլորտների հարցերի առնվազն 30 տոկոս կազմող ճիշտ պատասխանները:

36. Ճարտարագետ կոնստրուկտորներին.

1) արդյունաբերական, բնակելի, հասարակական շենքերի և կառույցների, աշտարակների, կայմերի և ճոպանուղիների ոլորտի

ա. բարձրագույն դասի արտոնագրեր տրամադրելու համար բավարար են համարվում առաջին խմբի (Ա, Ա1, և Դ1 ենթադասեր) թեստային առաջադրանքների

80% կազմող ճիշտ պատասխանները, առաջին դասի արտոնագրերի համար՝ առնվազն 60% կազմող ճիշտ պատասխանները,

բ. երկրորդ դասի արտոնագրեր տրամադրելու համար բավարար են համարվում երկրորդ խմբի (Ա2, Ա3, Դ2 ենթադասեր) թեստային առաջադրանքների 70% կազմող ճիշտ պատասխանները, երրորդ դասի արտոնագրերի համար՝ առնվազն 50% կազմող ճիշտ պատասխանները:

2) տրանսպորտային կառույցների ոլորտի (Բ. Բ1ա և Բ1բ ենթադասեր) բարձրագույն դասի արտոնագրեր տրամադրելու համար բավարար են համարվում թեստային առաջադրանքների 80% կազմող ճիշտ պատասխանները, առաջին դասի արտոնագրերի համար՝ առնվազն 60% կազմող ճիշտ պատասխանները):

3) հիդրոտեխնիկական կառույցների ոլորտի (Գ, Գ1, Գ2 և Գ3 ենթադասեր) բարձրագույն դասի արտոնագրեր տրամադրելու համար բավարար են համարվում թեստային առաջադրանքների 80% կազմող ճիշտ պատասխանները, առաջին դասի արտոնագրերի համար՝ առնվազն 70% կազմող ճիշտ պատասխանները, երկրորդ դասի արտոնագրերի համար՝ առնվազն 60% կազմող ճիշտ պատասխանները, երրորդ դասի արտոնագրերի համար՝ առնվազն 50% կազմող ճիշտ պատասխանները:

37. Քննական տեղեկագիրը լրացնելուց հետո հանձնաժողովի անդամները ստորագրում են այն և բաց քվեարկությամբ հաստատում են քննության արդյունքները:

38. Քննության արդյունքների հիման վրա հանձնաժողովը կայացնում է որոշում.

1) արտոնագրեր տրամադրելու վերաբերյալ, եթե հավակնորդը ստացել է «բավարար» գնահատական,

2) հայտը մերժելու վերաբերյալ, եթե հավակնորդը ստացել է «անբավարար» գնահատական:

39. Ընդունված որոշման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, իսկ որոշման պատճենը եռօրյա ժամկետում հանձնվում է հավակնորդին:

40. Քննություններից հետո մեկշաբաթյա ժամկետում Պալատի նախագահը արտոնագիր տրամադրելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը և համապատասխան արտոնագրերը ներկայացնում է լիազոր պետական մարմնի ղեկավարի հաստատմանը:

41. Արտոնագրման գործընթացում ծագած վիճելի հարցերի, որակավորման հանձնաժողովի որոշումների և քննությունների արդյունքների բողոքարկումն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

1. Ճարտարապետների արտոնագրման համար քննական առաջադրանքները կազմվում են հետևյալ ծրագրային ուղղություններով՝

1) Ճարտարապետների մասնագիտական գործունեությանն առնչվող ընդհանուր բնույթի հարցեր,

2) Ճարտարապետաշինարարական նախագծերի մշակում (արտոնագրման Ա և Ա1 դասեր),

3) Քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի մշակում (արտոնագրման Բ դաս),

4) Պատմաճարտարապետական հուշարձանների ամրակայում, նորոգում և վերականգնում (արտոնագրման Գ դաս)

2. Քննական առաջադրանքներն այնպես են կազմվում, որպեսզի դրանցում ընդգրկված թեստերի 30 տոկոսը վերաբերի ճարտարապետների մասնագիտական գործունեությանն առնչվող ընդհանուր բնույթի հարցերին, 50 տոկոսը՝ համապատասխան դասին, իսկ 20 տոկոսը՝ հարակից դասերին:

*3. Ճարտարապետների մասնագիտական գործունեությանն առնչվող ընդհանուր բնույթի հարցերը ներառում են հետևյալ ոլորտային ուղղությունները՝*

1) քաղաքաշինական գործունեությանն նպաստակով հողամասերի տրամադրում,

2) ինժեներաերկրաբանական հետազննումներ,

3) Նախագծման թույլտվություն,

4) Նախագծային առաջադրանքի (տեխնիկական բնութագրի) կազմում,

5) Նախագծային աշխատանքների կապալի պայմանագրի կնքում,

6) Նախագծի փորձաքննություն, համաձայնեցումներ և հաստատում,

7) Շինարարության և քանդման թույլտվություն,

8) Շինարարության իրականացում,

9) Շինարարության ավարտի փաստագրում և շահագործման թույլտվություն,

10) Քաղաքաշինական կադաստր,

11) Քաղաքաշինական գործունեության վերահսկողություն,

12) Ճարտարապետների արտոնագրում,

- 13) Արտոնագրված ճարտարապետի իրավունքներ և պարտականություններ,
- 14) Մասնագիտական էթիկայի և վարքագծի նորմեր,
- 15) Մասնագիտական հանրության (ճարտարապետների պալատի) և պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների հարաբերություններ:

*4.Ճարտարապետաշինարարական նախագծերի մշակմանն առնչվող հարցերը ներառում են հետևյալ ոլորտային ուղղությունները.*

- 1) Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի համակարգը,
- 2) Կառուցապատման նախագծեր,
- 3) Նախագծային առաջադրանք, տեխնիկական բնութագիր,
- 4) Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները նախագծային աշխատանքների կապալի պայմանագրում,
- 5) Կապալառուի իրավունքներն ու պարտականությունները նախագծային աշխատանքների կապալի պայմանագրում,
- 6) Հեղինակային իրավունք,
- 7) Ելակետային տվյալներ,
- 8) Շինարարության օբյեկտների դասակարգում,
- 9) Նախագծերի մշակման փուլային տարբերակներ (աշխատանքային նախագիծ, նախագիծ, աշխատանքային փաստաթղթեր)
- 10) Բնակելի շենքերի նախագծում,
- 11) Հասարակական շենքերի նախագծում,
- 12) Արտադրական շենքերի նախագծում,
- 13) Փորձաքննության տեսակներ.
14. Նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի համակարգ

*5.Քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի մշակմանն առնչվող հարցերը ներառում են հետևյալ ուղղությունները.*

- 1) տարածական պլանավորման փաստաթղթերի համակարգ,
- 2) ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագիծ (կազմ և բովանդակություն),
- 3) Տարածքային հատակագծման նախագծեր(կազմ և բովանդակություն),
- 4) Համակցված տարածական պլանավորման փաստաթղթեր (կազմ և բովանդակություն),

5) Համայնքի (բնակավայրի) գլխավոր հատագիծ (կազմ, բովանդակություն, տեխնիկատնտեսական ցուցանիշներ),

6) Գոտիավորման նախագծեր (կազմ և բովանդակություն, բազային և օժանդակ գոտիներ, թույլատրելի օգտագործումներ, կառուցապատման չափորոշիչներ, կառուցապատման և հողօգտագործման կանոններ, բնակավայրի քաղաքաշինական կանոնադրություն),

7) Տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցումների և հաստատման ընթացակարգեր,

8) Բնակավայրերի հատակագծման և կառուցապատման նորմեր:

*6. Պատմաճարտարապետական հուշարձանների ամրակայմանը, նորոգմանը և վերականգնմանն առնչվող հարցերը ներառում են հետևյալ ուղղությունները՝*

1) Հուշարձանների դասակարգումն ըստ նշանակության և բնույթի,

2) Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում,

3) Հուշարձանների հաշվառումն ու պետական ցուցակները

4) Հուշարձանների պահպանական գոտիները,

5) Պատմամշակութային արգելոցները,

6) Բնակավայրի պատմամշակութային հիմնավորումների նախագծեր,

7) Հուշարձանների հետախուզում և հնագիտական պեղումներ,

8) Հուշարձանների ամրակայում, նորոգում և վերականգնում,

9) Հուշարձանի նկատմամբ սեփականության իրավունքը,

10) Հուշարձանների պահպանություն և օգտագործում,

11) Հուշարձանների պահպանությանն առնչվող միջազգային պայմանագրեր



ՃԱՐՏԱՐԱԳԵՏ-ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ

ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Ճարտարագետ-կոնստրուկտորների արտոնագրման քննական առաջադրանքները կազմվում են հետևյալ ոլորտներ ի համար՝

- 1) Արդյունաբերական, բնակելի, հասարակական շենքերի և կառույցների, աշտարակների, կայմերի և ճոպանուղիների նախագծում
- 2) Տրանսպորտային կառույցների նախագծում
- 3) Հիդրոտեխնիկական կառույցների նախագծում

Արդյունաբերական, բնակելի, հասարակական շենքերի և կառույցների, աշտարակների, կայմերի և ճոպանուղիների կոնստրուկտորական փաստաթղթերի մշակման հարցերը ներառում են հետևյալ ուղղությունները՝

1. Քարեն ամրանաքարե կոնստրուկցիաներ և համակարգեր
2. Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ և համակարգեր
3. Պողպատե կոնստրուկցիաներ և համակարգեր
4. Պողպատաերկաթբետոնե կոնստրուկցիաներ և համակարգեր
5. Ինժեներական կառույցներ
6. Մեծաթռիչք տարածական ծածկեր
7. Շենքերի և կառույցների դինամիկա և երկրաշարժադինամիկություն
8. Բեռնվածքներ և ազդեցություններ
9. Ինժեներական երկրաբանություն
10. Գրունտերի մեխանիկա, հիմքեր և հիմնատակեր
11. Շինարարական մեխանիկա
12. Շենքերի և կառույցների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում
13. Շենքերի և կառույցների զննում և տեխնիկական վիճակի գնահատում
14. Կոնստրուկցիաների և կոնստրուկտիվ համակարգերի համակարգչային մոդելավորում, հաշվարկ և վերլուծություն
15. Ճարտարապետություն - Ձև - Կոնստրուկտիվ համակարգ
16. Շինարարական տեխնոլոգիա և շինարարության կազմակերպման նախագիծ

Տրանսպորտային կառույցների կոնստրուկտորական փաստաթղթերի մշակման հարցերը ներառում են հետևյալ ուղղությունները՝

Կամուրջներ /ավտոճանապարհային և երկաթուղային/

1. Կամուրջների նախագծման հիմնական դրույթներ և պահանջներ
2. Բեռնվածքներ և ազդեցություններ
3. Կամուրջների կառուցման համար կիրառվող նյութեր
4. Կամրջային հիդրոլոգիա
5. Հիմքեր և հիմնաստակեր
6. Կամուրջների /ավտոճանապարհային և երկաթգծային/ հաշվարկների հիմնական դրույթներ
7. Ափային /եզրային/, միջանկյալ հենարանների նախագծում (ներառյալ հաշվարկների հիմնական դրույթները) և կոնստրուկտավորում
8. Երկաթբետոնե թռիչքային կառուցվածքների նախագծում (ներառյալ հաշվարկների հիմնական դրույթները) և կոնստրուկտավորում
9. Մետաղական թռիչքային կառուցվածքների նախագծում (ներառյալ հաշվարկների հիմնական դրույթները) և կոնստրուկտավորում
10. Պողպատերկաթբետոնե /կոմպոզիտ/ թռիչքային կառուցվածքների նախագծում (ներառյալ հաշվարկների հիմնական դրույթները) և կոնստրուկտավորում
11. Երկաթգծային կամուրջների երթևեկելի մաս
12. Ավտոճանապարհային կամուրջների երթևեկելի մաս
13. Դեֆորմացիոն կարեր
14. Հենարանային մասեր
15. Կամուրջների սեյսմակայունություն
16. Հետիոտն ստորգետնյա և վերգետնյա անցումներ
17. Կամուրջների շինարարություն

**Թունելներ /ավտոճանապարհային և երկաթուղային/**

1. Թունելների նախագծման հիմնական դրույթներ և պահանջներ
2. Թունելների երեսարկների համար կիրառվող նյութեր
3. Թունելներ իերեսարկերի տեսակները և նրանց կոնստրուկցիաները
4. Թունելների երեսարկերի, նրանց ճակատամուտքերի հաշվարկների հիմնական դրույթները
5. Թունելների կառուցման եղանակներ, շինարարական աշխատանքների կազմակերպում
6. Մետրոպոլիտենների նախագծում

**Այլ արհեստական կառուցվածքներ**

1. Հենապատերի կոնստրուկցիաներ և նրանց հաշվարկների հիմնական դրույթները
2. Քայերեանների, բալկոնների կոնստրուկցիաներ և նրանց հաշվարկների հիմնական դրույթները
3. Մեղավապաշտպանիչ միջոցառումներ և նրանց հաշվարկների հիմնական դրույթները
4. Խողովակների նախագծման հիմնական դրույթները և հաշվարկները

**Հիդրոտեխնիկական կառույցների կոնստրուկտորական փաստաթղթերի մշակման հարցերը ներառում են հետևյալ ուղղությունները՝**

1. Հիդրոտեխնիկական կառուցվածքների նախագծման հիմնական դրույթներ
2. Մեխորատիվ համակարգեր

3. Հիդրոտեխնիկական կառուցվածքների սեյսմադիմացկուն շինարարություն
4. Հիդրոտեխնիկական կառուցվածքների հիմնաստակեր
5. Մազիաստրալ խողովակաշարեր, պողպատե խողովակաշարեր, խողովակներ լիցքի տակ
6. Բեռնվածքներ և ազդեցություններ հիդրոտեխնիկական կառուցվածքների վրա
7. Գրունտային պատվարներ
8. Բետոնե և երկաթբետոնե պատվարներ
9. Հենապատեր, ձկնթող և ձկնապաշտպան կառուցվածքներ
10. Հիդրոտեխնիկական թունելներ
11. Պարզարաններ
12. Հիդրոտեխնիկական կառուցվածքների բետոնե և երկաթբետոնե կառուցվածքներ

#### Գրականություն՝

1. ՀՀՇՆ 33-01-2014 ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ: ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ:
2. СНиП 2.06.03-85 Мелиоративные системы
3. ՀՀՇՆ II-6.02-2019 ՍԵՅՍՄԱԴԻՄԱՑՎՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ: ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԵՐ: ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ
4. СНиП II-23-81\* Стальные конструкции
5. СНиП 2.02.02-85\* Основания гидротехнических сооружений
6. СНиП 2.04.12-86 Расчет на прочность стальных трубопроводов
7. СНиП 2.05.03-84\* Мосты и трубы
8. СНиП 2.05.06-85\* Магистральные трубопроводы
9. СНиП 2.06.04-82\* Нагрузки и воздействия на гидротехнические сооружения (волновые, ледовые и от судов)
10. СНиП 2.06.05-84 Плотины из грунтовых материалов
11. СНиП 2.06.06-85 Плотины бетонные и железобетонные
12. СНиП 2.06.08-87 Бетонные и железобетонные конструкции гидротехнических сооружений
13. СНиП 2.06.07-87 Подпорные стены, судоходные шлюзы, рыбопропускные и рыбозащитные сооружения
14. СНиП 2.06.09-84 Туннели гидротехнические